ՀՏԴ 721.011

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Է.Մ.Սարգսյան,
Ե.Հ.Մարտիրոսյան,
Ն.Ռ.Ավագյան,
Մ.Գ.Հարությունյան

ՄԱՏՉԵԼԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ՝ ԵԼՆԵԼՈՎ ՄԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ

Ներկայացված են ֆիզիկական և մտավոր սահմանափակ կարողություններ ունեցող անձանց համար ճարտարապետական միջավայրի կազմակերպման խնդիրները ՀՀ տարածքում՝ ելնելով Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից սահմանված Կոնվենցիայի պահանջներից: Ուսումնասիրելով հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և անարգելք միջավայրի կազմակերպման միջազգային փորձն ու Կոնվենցիայի հիմնական պահանջները՝ անհրաժեշտություն է առաջանում ՀՀ տարածքում քաղաքային միջավարը կյանքի ժամանակակից պահանջներին հարմարեցնելու համար ներկայացված են մի շարք փոփոխությունների ցանկ:

Առանցքային բառեր. *մատչելի միջավայր, մատչելի ճարտարապետական միջավայր, հաշմանդամություն ունեցող մարդիկ, ճարտարապետական միջավայր, միջավայրի հարմարեցում և վերազինում, ՄԱԿ-ի Կոնվենցիա*

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովվեն միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելու համար կարևորագույն նախապայմաններից են բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների մատչելիությունը: Մատչելի տրանսպորտը հավասար հնարավորությունների, ինքնուրույն ապրելակերպի, համայնքի սոցիալական ու մշակութային կյանքում ակտիվ մասնակցության, ինչպես նաև զբաղվածության ապահովման նախապայմաններից մեկն է: Միավորված Ազգերի Կազմակերպությանկոնվենցիան հիմնված է հաշմանդամության սոցիալական մոդելի վրա, որն ուղղված է հավասար մատչելիության և խոչընդոտների վերացմանը: Մատչելիությունը (Accessibility) Կոնվենցիայի ղեկավար սկզբունքն է և կարևոր է դրա կիրառման բոլոր ոլորտներում: Այն ենթադրում է հավասար հասանելիություն բոլորի համար [1]: Կոնվենցիան միջազգային փաստաթուղթ է և պաշտպանում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ամբողջ աշխարհում: Թեև

անարգել միջավայրի կազմակերպման խնդիրը միջազգային մակարդակում ճանաչում ստացավ միայն 2006թ. Կոնվենցիայի հաստատմամբ, սակայն խնդիրն արդիական էր արդեն իսկ 20-րդ դարի սկզբին: Առաջին պաշտոնական փաստաթուղթը 1948թ. վավերացված մարդու իրավունքների մասին փաստաթուղթն է, որը սահմանում էր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները: Մատչելի միջավայր կազմակերպման ակտիվ փորձեր սկսեցին 1970–ական թվականներին [2]: Այս ոլորտում առաջին քայլերը արվեցին դեռևս 1920-ական թվականներից, երբ Առաջին Համաշխարհային Պատերազմից հետո հաշմանդամություն ունեցող անձանց թիվն աշխարհում կտրուկ մեծացավ: Էրգոթերապիայի կարիք ունեցող մարդկանց համար առաջ եկան նախագծման առանձնահատկություններ՝ վերականգնման գործընթացի խթանման համար: Այդ գործին ներգրավվեցին մարդուն հետազոտող մի շարք գիտնականներ: 1983թ. շվեդական մասնագետները հրատարակեցին «Կոնստրուկտավորումը հոգատարությամբ» տեղեկատուն, որը նախատեսված էր առաջին հերթին զարգացող երկրների համար: Հեղինակների հիմնական նպատակն էր նոր զարգացող երկրներին հետ պահել այն սխալներից, որոնց առջև կանգնել էին Շվեդիան և մյուս զարգացած երկրներն, արդեն իսկ գոյություն ունեցող շենքերի, կառույցների և միջավայրերի վերազինման և հարմարեցման գործում:

Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) փորձագետների կողմից կատարվող հետազոտությունները, հիվանդությունների դասակարգումը և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրությունը ուղղված են շահառուի կարիքներին համապատասխան անարգելք միջավայրի ստեղծմանը [3]: Վերջին տասնամյակում Հայաստանում սկիզբ է առել և աստիճանաբար արմատավորվում է հաշմանդամների նկատմամբ մարդու իրավունքի վրա հիմնված արդիական մոտեցումների և սկզբունքների որդեգրման գործընթացը: Փոխվել է հաշմանդամության գաղափարախոսությունը, փոխվել են մոտեցումները՝ բժշկական մոդելը փոխարինվել է սոցիալականով, ինչը ենթադրում է ոչ միայն հավասար իրավունքներ, այլև՝ հավասար հնարավորություններ և պարտականություններ: Այս գաղափարախոսությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության հիմքում:

Մեր երկրում գործող հարյուրավոր հասարակական կազմակերպություններից մեծ մասը պաշտպանում է հաշմանդամների ոտնահարված իրավունքները և նրանց շահերի պաշտպանությանն ուղղված բազմապիսի ծրագրեր է իրագործում: Այդուհանդերձ, մեր երկրում հաշմանդամն այդպես էլ չի դառնում հասարակության լիարժեք անդամ և շատ հաճախ ոտնահարվում են նրանց իրավունքները: Միայն վերջերս է ք.Երևանի կենտրոնում վերակառուցվել է 14 անցում և վերջապես հարմարեցվել հաշմանդամների կարիքներին: Սակայն հիմնականում փողոցները, սպասարկման օբյեկտները, բնակելի շենքերն ու հյուրանոցներն այդպես էլ անմատչելի են տեղաշարժվելու խնդիրներ ունեցող մարդկանց համար: Մինչդեռ «Զբոսաշրջության եւ զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 11-րդ

հոդվածի պահանջով հյուրանոցային ծառայություններ մատուցող անձը պարտավոր է հաճախորդների համար աչքի զարնող տեղերում տեղադրել հաշմանդամներին ծառայություններ մատուցելու հնարավորությունը հավաստող տեղեկատվություն, որը պետք է տեսանելի լինի նաև դրսից: Մեր երկրի հյուրանոցների մեծ մասում ոչ միայն նման տեղեկատվությունն է բացակայում, այլև՝ հաշմանդամների համար նախատեսված պայմանները [4]:

Հայաստանի Հանրապետությունը 2010թ. ևս վավերացրեց Կոնվենցիան, այն դարձնելով ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, այնուամենայնիվ ոլորտում առկա բացերն ակնհայտ են: Կոնվենցիան ենթադրում է մատչելի և հավասար միջավայրի կազմակեպումը հասարակության բոլոր խմբերի համար, այնինչ «Քաղաքաշինության մասին» ՀՀ Օրենքը սահմանում է նորմեր շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության միայն «սակավաշարժուն» խմբերի համար: Հայաստանում ապրող պաշտոնապես գրանցված 189000 հաշմանդամություն ունեցող անձանցից շատ քչերն ունեն լիարժեք կյանքով ապրելու հնարավորություն, մինչդեռ արտերկրում այս բնագավառի մասնագետները ճարտարապետների և ինժեներների հետ միասին տանում են ամենաակտիվ աշխատանք բոլոր տարիքային խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարձրացման համար: Ելնելով Կոնվենցիայի պահանջներից՝ կարելի առանձնացնել ՀՀ տարածքում մատչելի միջավայրի կազմակերպման համար առկա հիմնական խնդիրները և սահմանել դրանց լուծմանն ուղղված միջոցառումները [1]:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի միջավայր նախագծելու համար նախ և առաջ պետք է հասկանալ, թե կոնկրետ ինչ խնդիրների և արգելքների առաջ են նրանք կանգնում: Այդ իսկ պատճառով նախևառաջ անհրաժեշտ է հաշմանդամություն ունեցող մարդկանց խմբավորել ըստ ֆիզիկական և մտավոր շեղումների, հնարավորինս բացառելու համար արգելքներն ու հակասությունները միջավայրում և հասարակության մեջ [5]: Պետք է հաշվի առնել հաշմանդամ մարդկանց և տարեցների ֆունկցիոնալ պահանջների առանձնահատկությունները և միջավայրի նախագծման մեջ առաջարկել անհատական մոտեցում յուրաքանչյուր խմբին՝ հատուկ դեպքերում նաև յուրաքանչյուր անհատին: Այս ոլորտում զգալի առաջխաղացումն առաջին հերթին կախված է հասարակության վերաբերմունքից հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ: Այսպիսով, ելնելով հաշմանդամություն ունեցող անձանց պահանջներից, կարելի է առանձնացնել.

- ֆիզիկական սահմանափակումներ ունեցող կամ սակավաշարժուն խմբեր,
- մտավոր սահմանափակումներ ունեցող անձիք:

ՀՀ տարածքում մատչելի միջավայրի կազմակերպման համար առկա հիմնական խնդիրներն են՝

- Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից սահմանված Կոնվենցիայի պահանջներին ոչ լիովին հետևելը,

- թեև Կոնվենցիան ենթադրում է մատչելի և հավասար միջավայրի կազմակերպում հասարակության բոլոր խմբերի համար, այնինչ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը սահմանում է նորմեր շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության միայն «սակավաշարժուն» խմբերի համար,
- ՀՀ Օրենքը չի սահմանում միջավայրի կազմակերպման պահանջներ մտավոր սահմանափակ կարողություններ ունեցող անձանց համար:

Թեև որոշ առավել ծախսատար հասանելիության դրույթներ կարող են իրականացվել աստիճանաբար, կան մի շարք ցածր ծախսերի, ցածր տեխնոլոգիական հասանելիության լուծումներ, որոնք ունեն անմիջական օգուտներ: Այդպիսիք են, օրինակ, թեքահարթակների, բազրիքների, շոշափելի նշանների տեղադրումը հասարակական վայրերում:

2011թ. «Սկարպ» ՀԿ-ն Վրաստանի «Անկախ կյանքի դաշինք»-ի հետ համատեղ իրականացրել է «Մատչելի համայնք» ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել ամբողջովին մատչելի և սայլակից օգտվող անձանց տեղաշարժման համար համապատասխան միջավայր քք. Թբիլիսիի և Երևանի թաղամասերից մեկում, որը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը Հայաստանի և Վրաստանի սոցիալական, քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքին: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունները համագործակցել են տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար անձանց հետ՝ ծրագրի թիրախ հանդիսացող տարածքում բնակվող սայլակից օգտվող անձանց համար մատչելիությունն ապահովելու նպատակով: Ք.Երևանում, որպես թիրախային տարածք, ընտրվել է Ավան համայնքը: «Սկարպ» ՀԿ-ն 2011թ. առաջին կիսամյակում բազմաթիվ հանդիպումներ է ունեցել Երևանի Ավան համայնքի ՏԻՄ-երի հետ: Հանդիպումների ընթացքում երկու կողմերն էլ ցուցաբերել են համագործակցելու լիարժեք պատրաստակամություն և առաջնահերթ խոստացել համայնքի բոլոր հասարակական կառույցները դարձնել հնարավորինս մատչելի սայլակից օգտվող անձանց համար:

Այսպիսով, ֆիզիկական և մտավոր սահմանափակ կարողություններ ունեցող անձանց անկախ ապրելու և հասարակական կյանքին մասնակցելու հնարավորություն տալու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ծառայությունների մատչելիությունը, ելնելով Կոնվենցիայի պահանջներից և հիմնվելով «անձ - միջավայր - զբաղվածություն» բաղադրիչների վրա, որոնք հանդիսանում են հասարակության բնականոն գործունեության իրականացման նախադրյալները [6]:

Э.М.Саргсян,
Е.А.Мартиросяан,
Н.Р.Авагян,
М.Г.Арутюнян

ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ ДОСТУПНОЙ АРХИТЕКТУРНОЙ СРЕДЫ НА ТЕРРИТОРИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, ИСХОДЯ ИЗ ТРЕБОВАНИЙ КОНВЕНЦИИ ООН

Рассматриваются вопросы организации архитектурной среды для лиц с физическими и психическими заболеваниями на территории Республики Армения на основе требований Конвенции ООН. Исследуя международный опыт организации доступной и безпрепятственной среды, а также основные требования Конвенции, возникает необходимость ряда изменений в Республике Армения для приспособления городской среды современным требованиям.
Ключевые слова: *доступная среда, доступная архитектурная среда, люди с ограниченными возможностями, архитектурная среда, адаптация и обновление окружающей среды, конвенция ООН*

E.M.Sargsyan,
Y.H.Martirosyan,
N.R.Avagyan,
M.G.Harutyunyan

FEATURES OF ADAPTATION OF ARCHITECTURAL ENVIRONMENT ON THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA ACCORDING TO THE REQUIREMENTS OF THE UN CONVENTION

The issues of organization of the architectural environment for people with physical and mental diseases on the territory of the Republic of Armenia are considered on the basis of the requirements of the UN Convention. Investigating the international experience of organizing an accessible and unhindered environment, as well as the basic requirements of the Convention, there is a need for a number of changes in the Republic of Armenia to adapt the urban environment to contemporary requirements.
Keywords: *accessible environment, accessible architectural environment, people with disabilities, architectural environment, adaptation and modernization of environment, the UN Convention*

Գրականություն

1. United Nations Convention on the Rights of Persons with Disabilities - A Design Manual for a Barrier Free Environment. - United Nations, 2003-04.
2. Accessibility - 2017. - https://en.wikipedia.org/wiki/Accessibility.
3. Доклад Комитета экспертов ВОЗ по предупреждению инвалидности и реабилитации. – Женева, 1983.
4. http://www.aravot.am/2009/03/20/358246/
5. Критерии качества архитектурной среды для нужд инвалидов. - http://invasait.ru/.
6. **Мунипов В. М., Зинченко В. П.** ЭРГОНОМИКА: человекоориентированное проектирование техники «программных средств и сред». – М.: Логос, 2001. - 351 с.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Սարգսյան Էմիլիա Մկրտչի, ճ.թ., պրոֆ. *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (+374)95360100, milushik@mail.ru,* ***Մարտիրոսյան Երազիկ Հայկի*** *(ՀՀ, ք.Երևան) - ԱՍԷԴԼ, ՍՊԸ, ճարտարապետ, (+374)93203017, martirossianyerazik@gmail.com,* ***Ավագյան Նորայր Ռոբերտի, ճ.թ., դոց.*** *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, ա.գ.ա., (+374)91473906, norayr-avagyan@mail.ru,* ***Հարությունյան Մհեր Գագիկի, ճ.թ., դոց.*** *(ՀՀ, ք.Երևան) – ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, ա.գ.ա., ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, (+374)91409397, mherfl@xter.net*

Саргсян Эмилия Мкртичевна, канд. архит., проф. *(РА, г.Ереван) - НУАСА, проблемная лаборатория Архитектуры и строительства им. академика Ал. Таманяна, н.с., кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, (+374)091494420, milushik@mail.ru,* ***Мартиросян Еразик Айковна*** *(РА, г.Ереван) - ООО АСЭДЛ, архитектор, 093203017, martirossianyerazik@gmail.com,* ***Авакян Норайр Робертович, канд.архит., доц.*** *(РА, г.Ереван)- НУАСА, Пробл. лаб. Архитектуры и строительства им. Ал. Таманяна, с.н.с., (+374)91473906, norayr- avagyan@mail.ru.* ***Арутюнян Мгер Гагикович, канд. архит., доц.*** *(РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. акад. Ал. Таманяна, с.н.с., кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, (+374)91409397, mherfl@xter.net*

Sargsyan Emilia Mkrtich, doctor of philosophy (Ph.D.) in Architecture, prof. *(RA, Yerevan) - NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, Scientific Researcher, the Chair of Architecture Design and Design of Architectural Environment, (+374) 091494420, milushik@mail.ru,* ***Martirosyan Yerazik Hayk*** *(RA, c. Yerevan) – "ASEDL" llc - Architect, 093203017, martirossianyerazik@gmail.com, Avagyan Norayr Robert, doctor of Philosophy (PhD) in Architecture, associate prof. (RA, Yerevan) - NUACA, Problem Laboratory of Architecture and Construction after Al. Tamanyan, senior researcher, (+374) 91473906, norayr-avagyan@mail.ru.* ***Harutyunyan Mher Gagik, doctor of Philosophy (Ph.D) in Architecture, associate prof.*** *(RA, Yerevan) - NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, senior researcher, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical Heritage, Fine Arts and History, (+374) 91409397, mherfl@xter.net,*

Ներկայացվել է՝ 27.11.2017թ.
Ընդունվել է տպագրության՝ 11.12.2017թ.